«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1694-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1091-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի N 1055-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2334-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի N 407-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1241-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N 1085-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2023 թվականի ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1694-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 1694-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով.

2) Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մեջ է մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1091-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1091-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և 1-ին կետում «Ոստիկանության տեսալուսանկարահանող» բառերը փոխարինել «Տեսալուսանկարահանող» բառերով.

2) 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարությանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 1055-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի «Ճգնաժամային կառավարման ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն վերանվանելու մասին» N 1055-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Որոշման 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով:

2) Որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետի «գ» ենթակետում և 10-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 1791-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1791-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման՝

ա. վերնագրում, Որոշման և Որոշման հավելվածի ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարության կրթահամալիր» բառերով.

բ. 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարությանը» (այսուհետ՝ Նախարարություն) բառերով:

2. Որոշմամբ հաստատված հավելվածում՝

1) 1-ին կետում՝

ա. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն)» բառերը փոխարինել «Ներքին գործերի

նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)» բառերով.

2) 5-րդ կետի՝

ա. երրորդ պարբերության «полиции Республики Армения» բառերը փոխարինել «Министерства внутренних дел» բառերով.

բ. չորրորդ պարբերության «Police of the Republic of Armenia» բառը փոխարինել «Ministry of Internal Affairs» բառերով.

3) 10.1-ին կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ Նախարար)» բառերով.

4) 11-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

5) 13-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերը փոխարինել «Նախարարությունը» բառով.

6) 15-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն» բառերը փոխարինել «Նախարարությունն» բառով.

7) 16-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերը փոխարինել «Նախարարությունը» բառով.

8) 17-րդ կետի՝

ա. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կրթահամալիրի պետին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Նախարարը։».

բ. 3-րդ պարբերության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

9) 18-րդ կետի՝

ա. «ը» ենթակետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

բ. «ժգ» և «ժդ» ենթակետերի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

գ. «ժզ» ենթակետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին» բառերը փոխարինել «Նախարարին» բառով.

10) 22.5-րդ կետի՝

ա. «ե» և «ժէ» ենթակետերի «Հայաստանի Հանրապետության

ոստիկանության պետին» բառերը փոխարինել «Նախարարին» բառով, իսկ «է» ենթակետում՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը «Նախարարության» բառով.

բ. «ժը» ենթակետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի» բառերը փոխարինել «Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի».

11) 46-րդ կետի «բ» «գ» «դ» «ե» և «զ» ենթակետերի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

12) 52-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

13) 54-րդ կետի երկրորդ պարբերության «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Նախարարության» բառով.

14) 56-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Նախարարի» բառով.

15) 58-րդ կետի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Նախարարության» բառով:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի N 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» N 534-Ն որոշման 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ

իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2334-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 2334-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով:

2. Որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 15-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Ներքին գործերի» բառերով.

2) 17-րդ կետի 11-րդ ենթակետում «Տեխնիկական անվտանգության պետական կարգավորման մասին» բառերը փոխարինել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մեջ է մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ 2023 թվականի N__ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N 407-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-457-Ն օրենքի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-458-Ն օրենքի պահանջներով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 407-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի «Հատուկ կացարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 407-Ն որոշման 3.1.-ին և 4-րդ կետերում՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակայությամբ գործող Միգրացիոն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ենթակայությամբ գործող Միգրացիայի և քաղաքացիության» բառերով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ 2023 թվականի N__ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1241-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-457-Ն օրենքի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-458-Ն օրենքի պահանջներով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և «Հանրակացարաններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին»N 1241-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 11-րդ կետում և N 1 հավելվածի 10-րդ կետի 8-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերով՝ և դրանց համապատասխան հոլովաձևերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1 կետ.

«4.1. Սույն որոշման 4-րդ կետում նշված գույքն ամրացնել «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում վերապատրաստման արդյունքներով պաշտոնների նշանակման վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը։ Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը Որոշման 11-րդ կետում և N 1 հավելվածի 10-րդ կետի 8-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը կարդալ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն»։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

————————փետրվարի 2023 թվականի ———— -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1085-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի «Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1085-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման վերնագրում և 1-ին կետում «Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի» բառերով.

2) Որոշմամբ հաստատված Հավելվածի վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում և 7-րդ կետի 1-ին ենթակետում «Հաստատել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի» բառերով.

3) Հավելվածի 7-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «по чрезвычайным ситуациям Республики Армения» բառերը փոխարինել «Министерство внутренних дел Республики Армения».

բ. 3-րդ ենթակետում «Emergency Situations of the Republic of Armenia» բառերը փոխարինել «Internal Affairs of the Republic of Armenia » բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մեջ է մտնում Ներքին գործերի

նախարարության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից: